

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՄԱՔԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար Տարեկան 12 ֆր.
» » Վեցամսեայ 6 ֆր.
Արտասահմանի համար (Երկու քիւր մեկ ծրարով) Տարեկան 14, վեցամսեայ 7 ֆր.
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռայն զրկեղ հետեւեայ հասցեով

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ «ԻՐԱՎՈՒՆԿ» ԼՐԱԳՐՈՅ. — Վ.Ա.Ռ.Ն.Ա. (Պուշկարիա)
Редакция на ВѢСТНИКЪ
«И р а в у н к ъ»
ВАРНА (България)

Rédaction du journal
„I r a v o u n k“
V A R N A (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեայ գրութիւնք
էս չեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին աւ-
րոյնովին կամ մասամբ:
Մանուցման տղը 20 սանթիմ. երե-
քէն աւելի անգամներու համար 20 0/0
գեղը կը շինի:

ՄԵՐ ԶԵԿՈՅՑԸ

Ինչպէս յայտնի է «Իրաւունք»-ի
Գ. տարեշրջանին ութերորդ ամ-
սոյն մէջ կը գտնուինք. որ ըսել
է մեր յարգոյ բաժանորդաց բա-
ժանորդագրութիւնը սկսելէն ի վեր
ուժ ամիսներ կանցնին: Բայց ասոր
հակառակ, դեռ ունինք չաա մը
բաժանորդներ, որոնք չեն վճարած
իրենց բաժնեգրիները եւ այս պատ-
ճառով մենք, մանաւանդ վերջերս,
նիւթական անձկութեան մէջ կը
գտնուինք ու թերթին հրատարակ-
մանը համար կանխիկ եղող բոլոր
ծախքերը օրը օրին վճարելու դժ-
ուարութիւն կը կրենք. աւելորդ
է բացատրել թէ մտաւոր եւ ֆի-
զիքական ծանր զբաղմանց հետ
երբ մեր ուսին վրայ կը ծանրանայ
թերթին ամենօրեայ ծախքերը
վճարելու հոգն ալ, որ միայն մեր
բաժանորդաց պարտահատոյց լի
նելու անհոգութեան արդիւնքն է,
որչպիսի անտանելի կը դառնայ մեր
կացութիւնը:

Ուստի կուգանք խնդրել մեր
յարգելի բաժանորդներէն որ հաճին
ԱՆՅԱՊԱՆՎՈՐՈՒ Վճարել ԻՐԱՎՈՒՆԿԻ
ներկայ տարեշրջանի բաժնեգրիներն-
ը: Գիւղերու մէջ գտնուողները
եւ, որք Ս. Աստուածածնայ տո-
նին տալիս քաղաք կիշնեն, գիւ-
րութիւն կուենան իրենց բաժնե-
գիրը ուղղակի բօսթին յանձնելու
որով մեզ նիւթական անձկութե-
նէ ազատած կըլլան:

Խմբագրութիւն

ԱՆԱՏՈՒՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ

—)օ(—

«Թան» իր օգոստոս 16 թիւին մէջ
հետեւեայ խմբագրականը գրած է:
Գերման մամուլը շատ կը զբաղի
Անատոլի երկաթուղիներուն մին-
չեւ Պաղատաւ եւ Պարսկական ծոցը
երկարելու խնդրով: Տէօյշ-Պանքի
տնօրէնները, որոնք դրամապէս
Անատոլի երկաթուղեաց ընկե-
րութեան ետին կեցած են, ջանա-
ցին համաձայնութեան մը յանգիլ
իզմիր-Ալաշքի երկաթուղոյ անգ-
լիական ընկերութեան հետ՝ այս
մեծ ձեռնարկին համար: Զի յա-

ջողեցան եւ դարձան իզմիր-Գասա-
պի Ֆրանսական ընկերութեան
կողմը, որուն գիծը Գոնեաի ճիւղը
կը կապէ իզմիրի եւ ծովեզերքին:
Բանակցութիւններ տեղի ունեցան
որոնք յանգեցան անցեալ մարտ
6ին Պերլին կնքուած պայմանագ-
րի մը, ընդ Պ. Պ. Սիմէն-
սի, Կըլիմէրի եւ Հիւկնէնի՝ Տէօյշ
պանգի եւ Անատոլի երկաթու-
ղիներուն կողմէ եւ Պ. Պ. Պէնտէի
Օպուանօի, Սարթրի, Պիտէրմա-
նի եւ Վիթալիս կոմսին, որոնք կը
գործեն ի հաշիւ Օսմ. պանգայի,
իզմիր-Գասապի ընկերութեան եւ
Երկաթուղեաց ընդհանուր վար-
չութեան կողմէ:

Այս համաձայնութիւնը կը տը-
րամադրէր որ երկու խմբակները
Պաղատաւն Պարսա երկաթուղիի
մը շինութեան ձեռնարկին, ծախ-
քերը բաժնելով 60 0/0 գերման
խմբակին եւ 40 0/0 Օսմ. պանգի
կողմէ: Կատարեալ համաձայնու-
թիւն մը ապահովելու համար եր-
կու ընկերութեանց իւրաքանչիւրը
պարտաւոր էր երկու անգամ ընտ-
րել միւսին վարչական խորհուր-
դէն:

Անցեալ յունիս 10ին Անատո-
լի երկաթուղեաց ընկերութեան
նախագահ Տօք. Զանտէր յիշա-
տակագիր մը Սուլթանին ներկա-
յացուց, որուն մէջ իր ձեռնարկին
պատմութիւնը յիշեցնելէ եւ գիտել
տալէ ետք օսմ. կառավարութեան
կողմէ վճարուած երաշխաւորու-
թեան գեղը՝ ընկերութեան բա-
րեփաստիկ վիճակին հանդէպ, կը
տեղեկագրէր ուրիշ ընկերութեանց
հետ կատարուած բանակցութիւն-
ները երկաթուղիին գիծը մինչեւ
Պարսկական ծոցը երկարելու մա-
սին: Յիշելէ ետք մարտ 6ին Պէր-
լին կնքուած պայմանագիրը՝ եւ
յայտարարելէ յետոյ թէ գերման
խմբակը իր 60 0/0ին 20ը օսմ.
ընկերութեանց կը թողուր, առա-
ջարկեց ձուլուիլ օսմ. նեան ընկե-
րութեանց հետ որոնք շահակից
ըլլան մեծ ընկերութեան մը մէջ:
«Օսմ. կայսր. ընկերութիւն Ն. Վ.
Սուլթան Համիտ Բ. Ի» անունով:
Արտօնութիւններ պիտի չնոր-
հուին իրեն. 1.) Անատոլի եր-

կաթուղեաց արդի ծայրէն՝ որ էն-
կերի կը գտնուի, գիծ մը եր-
կարի որ իօզկատի, Կեսարիոյ եւ
Մարաշի ճամբով երթայ Այնթապ-
եւ այս գիծը երկարի մինչեւ Պաղ-
տատ անցնելով Եզեսիաէն, Տիգ-
րանակերտէն, Մէրտինէն եւ Մու-
սուլ-Այնթապէն իսկէնտէրունի
ճիւղին հետ միանալու: 2.) Գօն-
եա վերջացող Անատոլի գիծը
Ատանա-Մարաշի եւ Այնթապի
ճամբով մինչեւ Պաղտատ երկարի
վիրոյնչեալ ձեւով: Տրուած ար-
տօնութեամբ ի հարկին Պաղտա-
տի գիծը պիտի երկարի Պարսա
Քէրպէլիի եւ Նէճէֆի ճամբով:

Յունիս 18ին, այս ձեռնարկին
դրամական պայմաններուն վերա-
բերեալ նոր յիշատակագիր մը մա-
տուցուեցաւ, որուն դրամապէսը
250 միլիօն ֆրանք պիտի ըլլայ,
սակէս. նոր գծին համար իւրա-
քանչիւրն քիւմէթիօի համար ե.
րաշխաւորութեան գումար չպիտի
տրուի: Անատոլի գծին համար
վերջերս շնորհուած քիւմէթիօի ե.
րաշխաւորութիւնները պիտի վա-
ւերացուին. այս երաշխաւորու-
թեանց գումարները Օսմ. Պան-
գային պիտի վճարուին 6 տար-
ուան պայմանաժամով, որու մի-
ջոցին ընկերութիւնը յանձն կառ-
նէ գիծը մասով ամբողջացնել մին-
չեւ Պաղտատ. գծին աւարտու-
մէն ետքը ընկերութեան բաժնե-
թուղթերը (ընդ որս Գասապի
ընկերութեան թուղթերը) պիտի
փոխուին նոր բաժնեթուղթերու
հետ որոնց արժէքը 500 միլիօն
ֆրանք չանցնի, եւ ի հարկին կա-
ռավարութեան Օսմ. Պանգային
վճարուելիք գումարները յատկաց-
ուին 3 0/0 տոկոս մը երաշխաւո-
րելու սոյն բաժնեթուղթերուն:

Մինչ այս մինչ այն վտանգա-
ւոր մրցակից մը երեւան ելած էր
յանձին Պ. Ռէքիցըրի որ յանուն
անգլիական Նէկտիքսի մը կա-
ռարչարէ՝ առանց տոկոսի երաշ-
խաւորութեան, գիծ մը շինել որ
Գօնեաէն սկսելով Ատանաէն անց-
նի եւ իսկէնտէրունի երթայ եւ Հա-
լէպի ճամբով Պաղտատ ու Պար-
սա երկարի: Կը հասկցուի թէ,
ազդեցութեանց եւ շահերու այս

պայքարին մէջ Գերմանիա՝ որ
կուզէ փոքր-Ասիան ամբողջովին
ձեռք ձգել եւ այս հարուստ եր-
կիրներուն մէջ տեսակ մը տնտե-
սական աւատականութիւն ձեռք
բերել, այս երկիրները, որոնք
երկաթուղիներով սահմանուած են
թերեւս աշխարհի շտամարանը ըլ-
լալ վերստին, Ռուսիոյ եւ Ամերի-
կայի ցորեններուն դէմ Եփրատի
հովտին ցորենները հանել, ամեն
ուրէք օժանդակներ կը փնտռէ:

Միւս կողմէ Ռուսիա, ոչ նուազ
բան Անգլիան, անտարբերու-
թեամբ չի դետեր այս աստիճա-
նական տիրապետութիւնը երկրի
մը որ երկար ատենէ ի վեր իրեն
վերապահած էր:

«Նօվօէ վրէմիա» սաստկապէս
կը քննադատէ գերմանական պա-
հանջուները եւ կը յայտարարէ որ
ցորչափ թուրքիա իր պարտք չի
վճարէ Ռուսիոյ, այսինքն մինչեւ
քաններորդ դարու վերջը, ազատ
չէ այս տեսակ երկիրը զբաղի տա-
լու ձեւով պայմաններու ենթար-
կուելու եւ փոքր-Ասիան ուղածին
պէս տրամադրելու: Տարտամօ-
րէն կը խօսուի՝ այն տեսակ մի-
ջոցներու մասին որոնք ձեռք առ-
նուեցան Զինաստանի մէջ նմանա-
պէս երկաթուղիներու շինութեանց
առթիւ:

Ասիկայ շատ գեղեցիկ եռանկ-
իւնի մենամարտ մըն է որ կսկսի:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

(Կիրիտ), Գանեա 23/4 օգոստ. 99

Կը փոփաքիք մեր կողմէն շը-
կատմամբ տեղեկութիւն ստանալ.
ձեր այս փոփաքը պիտի կատար-
ուի ի մօտոյ. միայն այսօր ձեզ
կիմացնեմ թէ «Քալէ քաբուսի»
ըսուած դռները, իրենց կամար-
ներով վար առին. այդ մութ խա-
ւեր հրապարակ ելան. նաւահան-
գատին ալ կողմէն սկսելով, մին-
չեւ վինետիկեան պարիսպներուն
ծայրը, նոր քարափ մը շինել ըս-
կան. մէկ ամիսէն պտոյտի հա-
մար ծովեզերեայ գեղեցիկ վայր
մը պիտի ունենանք: Իշխանին
յատուկ պալատան շինութիւնը ա-
ւարտեցաւ. փողոցները հետզհետէ

կանոնադրուելու վրայ են. հասարակաց պարտեզին մէջ, դաշտային թատրոն մը հաստատուեցաւ. թատերական յոյն խումբ մը ամեն գիշեր ներկայացումներ կուտայ:

Տասը օր առաջ, մասնաւոր շոգենաւ մը մեզ բերաւ 500ի մօտ հեղիններ, նուագախումբի մը առաջնորդութեամբ. ամեն կողմ հայրենասիրական ցոյցեր. իշխանին պալատին առջեւ ու «չառըր-վանի» հրապարակը եռանդագին ատենախօսութիւններ, գիշերը հասարակաց պարտեզին մէջ ազգային պար ու երգ. լուսավառութիւն ամեն կողմ. միմիայն տաճիկները, այս լոյսերէն զարհուրած, պահուած էին իրենց մութ տուններուն մէջ:

Հայ մը՝ ազատագրութեան այս շնորհները, ու այս երախայ ժողովուրդին խանդավառութիւնը տեսնելով՝ չէր կրնար անտարբեր մնալ:

Մօտենանք մեր խնդրոյն. «Իրաւունք» լրագրոյ վերջին թիւերէն տեղեկացանք թէ՛ Հոլանտայի մայրաքաղաքին մէջ տօքթ. Բիւրբէր, Տիար Մինաս Չերազի առհրանտական ժողովուրդն դիմուածին առթիւ, մեր ազգային դատին պաշտպան ֆանգնած, և խօսած է հրապարակաւ, ինչ որ մարդ մը, յանուն մարդկութեան կրնար խօսիլ, հայոց անվերջ չարչարանաց դէմ:

Այս մեծ մարդուն, առհայն ունեցած համակրութենէն զգած ուած, տեղս գտնուող սակաւթիւ հայերուն կողմէ անոր շնորհակալութեան գիր մը զրկուեցաւ, այս գրութեան մի օրինակն ալ կը զըրկուի խմբագրութեանդ, ի հրատարակութիւն, եթէ կամիք:

Մեր կեանքին, գոնէ վերջին օրերուն, պիտի տեսնենք արդե՞ք այն օրը, յորում աստ անդ ցըրուած հայեր ի մի խմբուած, ձեռք ձեռքի, մոռանալով իրենց անդար-

մանի կորուստը, գոնէ ուրախութեան ժպիտով մը մտնեն այն երկրին մէջ, որ մարդկութեան մայրը եղած է:

Սօֆիա, 6 օգոստոս 99

Սլոմապուովիստներու բաժանման յայտարարութեան վրայ հակակուսակցութիւնը ծափահարեց և յանձնուաւ ուրախացաւ. գաւառներէն շատեր եկան, մանաւանդ Յանքովիստներ իրենց բռնելիք նոր ուղղութիւնը գծելու համար: Բան մը չկայ թէ եւ, սակայն լըրագիրներ շատ առաջ կերթան, թէ՛ ձախ թէ՛ յաջ. քար կը նետեն կը հարուածեն կառավարութեան պետերը և մօտալուտ կը տեսնեն անոնց վախճանը:

Կը մեղադրեն իշխանը, որ աւելի իւր հաճոյից կը հետեւի, կրսն, ինքզինք զբօսանքի տուած է, չմտար երկրին մէջ, երբ կուսակցութիւնք այսչափ յուզեալ են իրարու դէմ, չգործեր իբրեւ երկրին պետը, աւելի կը հրամայէ քան թէ կը կառավարէ, չյարգեր սահմանադրութիւն եւն. հեն. ուրոնց վերջ չկայ. զկիւրք երեք:

Կը մեղադրեն նախարարպետը, որ յայտնի կուսակցական գոյն չունի, կրսն, երբեմն սլոմապուովիստ եղած է, երբեմն ալ պահպանողական, այսօր ալ ռատուալափօվիստներու հետ միացած է,

Գրեցին և կը չորեն տակաւին Պ. Ռատուալափօվին դէմ ալ, որ այսպիսի անգոյն մէկը նախարարպետ կընդունի, մինչդեռ կրսն, սահմանադրապէս և կուսակցական տեսակէտով ինք կը պարտի ըստանձնել այդ պաշտօն:

Կառավարական թերթեր պատասխան իսկ չեն տար կամ չեն ուզեր տալ այսպիսի հրատարակութեանց, որոնց նպատակ միայն մէկզմէկու ձգել է և կը շատանան հակակուսակցութեան ամեն մի

բաժնին անցեալը նկարագրելով: Կառավարականաց այս ընթացքէն աւելի յուզեալ և զրգուեալ հակակուսակցութիւնն ալ վերջերս աւելի յուզիչ զրոյցներ հանեց, գրեցին և քաղաքիս գրեթէ ամեն մէկ շրջանին մէջ ալ պահ մը իսկ իբրեւ իրողութիւն խօսուեցաւ, որ իբր թէ Պ. Պ. Կրէքով և Ռատուալափօվ գփտած են այն աստիճան, որ նախարարապետը հեռագրով զրկած է իւր և բոլոր ընկերաց հրաժարականը: Առեւտրա, կան և տնտեսական արդի տագնապին մէջ այս լուր լաւ ազդեցութիւն չըրաւ հասարակ մահկանանցութեան վրայ, որ սովորաբար անտեղեակ կը մնան դարձուածքներու, որով և դիւրահաւան կը լինին, ուստի հերքում մը հարկաւոր էր. և ահա Նով-Վէգ, որ քիչ կը գրէ այսպիսի զրոյցներու վրայ, պաշտօնապէս յայտարարեց, որ բոլոր ըսուածներն ու գրուածները սուտ են և կը ծառայեն միայն միտքերը պղտորելու, ժողովուրդը զրգուելու ու կառավարութեան վստահութիւնը կոտորելու, միւս կողմէ Պ. Պ. Կրէքովի և Ռատուալափօվի ստորագրութեամբ թուղթ մը, շրջաբերական մը զըրկուեցաւ գաւառական իշխանութեանց, յորում կը յայտնուի թէ մաս մը սլոմապուովիստներ միացեալ-ազատական կուսակցութեանէն զատուած առանձին պիտի գործեն և թէ նախարարապետին ու ներքին գործոց նախարարին միջեւ բնաւ անհամաձայնութիւն չկայ, ընդհակառակը կատարեալ համաձայնութիւն կը տիրէ. և այս մասին եղած տարաձայնութիւնք միայն թշնամութեան և խառնակութեան արդիւնք են և թէ կառավարականք կը պարտին ինչպէս միշտ և այժմ միաբան գործել:

Օգոստոս մէկին եղած նահանգային խորհրդականաց ընտրութիւնք ալ հաստատեցին միանգամ

եւս, որ ապաքէն կառավարութեան կուսակցիցներ գիտեն միաբան գործել և 22 նահանգի մէջ հակակուսակցութիւնը 4-5 տեղ միայն վստակեցաւ մինչդեռ մնացածը կառավարականաց կը պատկանի:

Այսպէս լրագրական այնչափ յուզումներ, գոռում գոչումներ այս արդիւնք միայն ունեցան հակակառավարականաց ուրախութիւնը փորձերին միաց. սակայն ասով չը մնար ամեն բան, հիմա ալ կըսպասուի իշխանին վերադարձին. այն ատեն ալ բան չեղաւ, Սօֆիանիէի բացման, բոլոր հրեափոխաններ պիտի գնան և պիտի լինի, ինչ որ պէտք է եթէ ան ատեն ալ բան մը չեղաւ պատմական թուականներէ պակսիւր. . . .

Յուսով ապրիլ գէշ չէ շիտակը և ո՞վ յուսով չապրիւր աշխարհի վրայ, միայն թէ հաստատուն յուսով ապրիւր գիտցուեր և ոչ թէ խանգարեալ երեւակայութեամբ:

Յոյս կայ, կամ աւելի լաւ կը յուսացուի, որ տեղույս ազգ. գործոց անկիրպարան վիճակն պիտի փոխուի մը ամեն. իսկ թէ ե՞րբ և ինչպէ՞ս, կը գրենք ժամանակին:

ԱԶԴ ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ Ա. ՏԱՐԻ

Կազմեց Բ. Կ. Պօլիճագեան

Այս պատկերազարդ Գերական — Ընթերցարանը որ մինչև օգոստոս 20 լոյս պիտի տեսնէ, կը յանձնարարուի մասնաւորապէս Պատ. ուսուցիչներու ուշադրութեան: Պատրաստուած է շատ գիւրդուսոյց մէթոտով և կը պարունակէ բարոյական խրատներ, իրադրական և առողջապահական ծանօթութիւններ, կայսր և սիրուն պատմութիւններու և ա.

ԲՈՒՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ (33)

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅ ԿԵԱՆՔԷ ՊԱՏԿԵՐ ՄԸ

— 0. —

ՄԱՍՆ Բ.

Դ

Վահրամի Պոլսոյ մէջ Լեւոն Պօղոսեանի միանալը իր ծրագրին յաջողութեան իր սպասած զարկը տուաւ:

Լեւոնը, հօրմէ որբ, պզտիկութենէն ուսման ծարաւով տոգորուած, Պէշիք-թաշի թաղային վտրժարանին մէջ առած էր իր նախնական ուսումը եւ իր ակորթելի ձայնին շնորհիւ քանի մը չոր սիրտ աղաներու կարիկցութիւնը հրաւիրելով վրան, իրականութեան մէջ զերօ, բայց անուանապէս մեծ համբաւ ունեցող փո.ճ Գուրգէնտն մասնաւոր վարժարանը յաճախելով անկից շրջանաւարտ դուրս եկած էր. Վահրամի հետ ծանօթացած ատենը քսաներէք տարեկան էր. իր վրայ տեսնուած աչքի զարնող յատկութիւններն էին այն ատեն մտքի բաւականաչափ պաշար, զարգացում, ժամանակի հասկացողու-

թեան համեմատ թունդ ազգասիրութիւն, ի վերջոյ իր նկարագրին ամենէն ցցուած ու շագրաւ մասը՝ կորակոր յամառութիւն, անանկ տեսակէն յամառութիւն մը որ գոռով ձերմակը՝ սեւ, սեւը՝ ձերմակ ընելու կաշխատի: Սա 85 թուականին սկսելով ազգային դատին զինուոր նշանակած էր ինքզինքը եւ իր ան տեսնի թարմ հայեցողութեամբ առաջադրած էր գոհունակ ազգային անկախութեան փրկարար սեղանին. ետքը պիտի տեսնանք թէ ո՞րքան հաւատարիմ մնաց ան իր առաջադրութեան: Եւ չեմ կարծեր որ Պոլսի մէջ իր պապեանական-ազգային գաւառութիւններուն վրայ իբրեւ անձեռնմխելի սրբութիւններու անկից աւելի գուրգուրացողները գտնուած ըլլան. սիրտին խորէն որքան իր ներքնահայեցողութիւնը կը զօրէր շովին չէր, բայց իր ազգին մէկ մազը աշխարհիս է՛ն զարգացած ցեղին գերագոյն փառքին հետ չէր փոխեր. կրօնամուկ չէր, այլ Հայաստանեայց եկեղեցին անոր համար ազգային ճշմարիտ փրկութեան միակ կուսան էր: Ժամանակը, ընկե-

րութիւնը, պայմանները որոց մէջ կը ապրէր իրեն ինքնաբերաբար թելագրած էին այս տեսակ զգացում եւ համոզումներ. Վահրամ իբրեւ գաւառացի թունդ էր, բայց աւելի լուրջ ըլլալով Լեւոնին չափազանցութիւններուն վրայ կը հիանար, այլ իբրեւմ կը քննադատէր զայն:

«Եւ չեմ ըսքոնք ճշմարիտ հայրենասէր մը, պատասխանեց օր մը անոր Լեւոն, որ չգիտնայ մեր ամենամահութեթ երեւցած առասպելներուն եւ նախապաշարութեան վրայ գուրգուրալ, ինչ ժամանակի մէջ եւ ո՞ր կապիւնք հիմակուան արտաքինը փայլուն, այլ ներքինը անհիմ հասկացողութեան եւ զանազան սուր քննադատի աչքով նայիլ սորվեցուց ռամիկ հայուն Հայկի, Վարդանի, Վասակի վրայ, երբ գուն ալ արդէն ըսածիք վրայ կատարելապէս վստահ չես, պիտի տեսնաս որ իր ազգը ուրքի տակ պիտի առնէ եւ ասանկով անասունի մը պիտի փոխուի ան ո՞չ իրեն եւ ո՞չ ալ իր գտնուած հասարակութեան օգտակար չըլլալու պայմանով. տեսակ մը աշխարհաքաղաքա-

ցի անբարոյականի պիտի փոխուի ան որ քանի մը բառեր գոց պիտի ընէ եւ ուրկէց սոսկալ պէտք է. ճշմարիտ գործունէութիւնը, ինչպէս դու ալ կըսես յաճախ, իմ ալ չափազանցութիւններ ալ չունենալով, լուրջ կեցողով ժողովուրդին հետ քայլ առ քայլ ընթանալուն մէջ կը կայանայ, իբրեւ հայ ապրելու, իբրեւ հայ գործելուն մէջ ալ այժմ եւ հիմակու հիմա, թիւրքին հետ քիւրտին հետ սրտակցելու, եղբայրութեն չեմ կրնար ապրիւ, անոր համառ ալ այժմ իբրեւ հայ յեղափոխական քարեացալաւ չեմ կրնար ըլլալ. որովհետեւ յեղափոխուիլ, բիրտ ուժին դէմ ժանիք ցցիլ կը նշանակէ եւ բիրտ ուժին դէմ տեսական-փիլիսոփայական խոհումներ կը չքանալ. լայն մարդկասիրական հակումները շատ շատ ուղիղս կրնան քրքրել բայց ատենը հիմնապէս մարտելի ընել ժողովուրդի այն մասին որ գործնական դերը պիտի կատարէ, գործունէութեան կտրուկ եղանակը ձգելով մանուածապատ միջոցներու գիմիլ կը նշանակէ: Գիտես որ մեզնէ տարիքոտ, բայց համազումներով

առջնորդ և ձեռն թուակ, որոնք գր-
բուած են մանուկներու համար.
նայի լեզուով: Այգապիւն-պատմա-
կան ամենէն նշանաւոր մէկ քանի
դէմքերու և դէպքերու վրայ կարծ
տեղեկութիւններ, քերականական
քանի մը գիտելիք, մանկական
երգեր և հանելուկներ, ամենքն
ալ խնամքով ընտրուած, պղտիկ
տղսց համար շատ հետաքրքրա-
կան և հրահանգիչ կը դարձնեն
գրքոյկին ընթերցումը:

Գին, 60 սանթիմ հատը: Դրպ-
բացներու և գունէ 20 օրինակ գր-
նոցներու համար 15 օ/0 զեղջ:
Փիմիկ սա հասցէով՝ J G Bon-
djoukian Varna

ԻՐԱՌՈՒՆՔԻ ԹԷ՝ ԶԱՓԱԶՆՅՈՒԹԻՒՆ

ԻՐԱՌՈՒՆՔԻ վերջնորդ թուին մէջ
ընթերցասիրաց ընկերութեան նկատ-
մամբ ըրած գիտողութիւններու և պա-
տասխան վարչական ժողովոյ անդամ-
ներէն մին Գեորգի Կարապետեան
տեղական թերթի մը մէջ բառերու
շարք մը հիւսած է. որմէ չենք գիտեր
թէ արդեօք իրմէ զատ մէկը բան մը
հասկցաւ:

Դիտողութիւններու Իրաւունքի մէջ
երեւցած օրն իսկ հոս հոն, հրապարա-
կի մէջ, ամեն տեղ կը խօսուէր թէ
Պ. Գեորգի անհրաժեշտ ու փախչանի
փաստերով պիտի ջրէ զանոնք. ուստի
մինք ալ ուրիշներու նման հետաքր-
քութեամբ ապաստեցինք հերքումին ու
կարողացինք. բայց ի՞նչ հերքում, ի՞նչ
փախչանի փաստ ու պատասխան:
Յուսարարութիւն. Պարոնի փոխանակ
մեր գրածները հերքելու, սնտոի ու
փուճ պատճառաբանութիւններով ելեր
տեղական երիտասարդութեան հանրա-
յին գործերու մէջ ցոյց տուած անյա-
րատեւ ընթացքը արդարացիւք. զժող-
ջանք:

Կը սխալիք պարոն, բացարձակա-
պէս կը սխալիք. երբ իրաց այս վի-
ճակին իբր պատճառ լոկ ժողովուրդը
կուզէ՞ց ցոյց տալ: Ի՞նչ, միթէ անկա-
րելի է Վառնայի մէջ Հայկական ըն-
թերցարանի մը գոյութիւնը: Ինչպէս
որ ասկէց ալ առաջ հարցուցի, կ'ըրկ-
նեմ զարձեւել թէ կը պակսի՝ Վառնայի
հոյութեան մէջ այնպիսի օգտաշատ
գործի մը օժանդակող ու քաջալիրող
տարր մը. — երբեք: Ասոր իբր փայ-
լուն ապացոյց կարելի է ծառայել երի-
տասարդութեան քանի մը ամսուան յա-

րատեւ ու եռանդուն գործունէութեան
արդիւնքը:

Պարոն: Ընթերցասիրացի ներկայ
աննախանձելի վիճակը արդարացիւք
համար ըրած պատճառաբանութիւնիդ
բոլորովին անտեղի է. եթէ ունիք ու-
կայ ուրիշ պատճառ մը ան ըսէք մեզի-
կը զրէք թէ յարատեւութեան ոգիէն
ալ կը հասկնաք. բայց ձեզ ո՞վ պնդեց
հակառակը. մենք միայն գրեցինք թէ
երիտասարդութիւնը զուրկ է անկէ եւ
ոչ թէ հասկնալու. ունենալ ու ըմբռնել
ոյ՛քան տարբեր է կը հասկնա՞ք, պա-
րոն: Չափազանցութիւնը յարգելի չէ
կըսէք. լա. խնդրեմ ըսէք որն է չա-
փազանցութիւնը: Ի՞նչ, կուզէիք որ
ըսէի թէ ցայդ Վառնայի մէջ Հայկա-
կան Ընթերցարանի մը չգոյութիւնը
պատուարեր է երիտասարդաց համար,
իթէ այսպէս կուզէք ըսէք, թէ ոչ ի-
րողութիւնը չափազանցութիւն մի ան-
ուանէք:

Հիմա, առիթէն օգտուելով առանց
երկարաբանելու. ձեզ քանի մը հար-
ցումներ ուղղելով. կը խնդրեմ որ ա-
ռանց ալ ու ձախ երկարալու հաճիք պա-
տասխանել. խնդրեմ ըսէք:

Ա. Եթէ՛ ինչպէս զուրկ կըսէք, ժո-
ղովուրդը չքաջալիրեր երիտասարդա-
թեան ջանքեր, ինչպէս կարելի եղաւ
մի քանի ամսեայ գործունէութիւնով
Սիսական ընկերութեան շուրջ երկու
հարիւր ֆրանք պարտքն վճարելէ զատ՝
հարիւր ֆրանք գումար մ'ալ հնչուեւ
գրամ պատրաստ ունենալ:

Բ. Վեց եօթն ամիս առաջ գումար-
ուած ընդհանուր ժողովէ մը ընտրուած
վարչական ժողովը քանի՞ նիստ ըրած
է ի՞նչ կատարած է ցարդ:

Գ. Ի՞նչ է Գործադիր ժողովոյ ան-
գործութեան պատճառը:

Դ. Վարչական ժողովոյ յարգելի ա-
տենապետը ի՞նչ պատճառաւ. ընտրու-
թեանէ քիչ յետոյ իր հրաժարականը տը-
ւաւ:

Ե. Ընկերութեան ներկայ անկերպա-
րան վիճակը տեսնելով անդամներէն ու-
մանց քանի մը ամիսներէ ի վեր ընդհ-
ժողով գումարելու խնդիրը ի՞նչու նը-
կատուութեան չառնուի:

Ձ. Ի՞նչ ընել կը խորհինք ասկէ
վերջը:

Այս հարցումներէս վերջ՝ գալով ձեր
յօդուածի այն պարբերութեան, յո-
րում ընթերցասիրացի շուրջ հաւաք-
ուած պարոններու թերթ մը հրատա-
ցակելու հարցով զրազելին հրապարա-
կելու թեթեւութիւն անաւանած էիք:
Ձեզ կը վերագրածնեմ այն իր բովան-

դակ նշանակութեամբ. որովհետեւ ե-
թէ իրօք գաղտնի մնալու պայմանով
եղած էր այդ. նախ պէտք չէր որ այդ
հարց յուզողները սրճարաններու մէջ
ասոր անոր խօսէին: Մենք Ձեր գաղտ-
նիք բաժնի Վառնայէն ալ անգին, մին-
չեւ Ռուսոնք արձագանգ գտնելէ ու
այդ արձագանգ Վառնա անդրադառնա-
լէ յետոյ միայն հրապարակեցինք:

Կ. ՇԱՐԱՀԻՒՍԱՆՑ

ԼՐԱՔԱՂ

Սիսի կաթողիկոսական ընտ-
րութեան հսկելու պաշտօնը Տ.
Սահակ եպիսկոպոս Խապայեան
ընդունած ըլլալով կը պատրաս-
տուի քիչ ատենէն մեկնելու Ատա-
նա, ուր պիտի կատարուի ընտրու-
թիւնը: Կառավարութիւնն ալ իր
կողմէ պաշտօնեայ մը պիտի շըր-
կէ անցած դարձածը աչքէ անցնե-
լու համար, կամ աւելի ճիշդ թըր-
քասէր եկեղեցական մը ընտրել
տալու գիտումով:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան ի-
րաւասութեան տակ կը գտնուին
հետեւեալ թեմերը. Հալէպի կու-
սակալութեան մէջ՝ Հալէպ քաղա-
քը 2 գիւղերով: Մարաշ 6 և Ա-
թաքիա՝ 13 գիւղերով: Ատանայի
կուսակալութեան մէջ՝ Ատանա քա-
ղաքը 10 գիւղերով, Սիս 4, Հա-
ճնի՝ 5 և փայաս՝ 10 գիւղերով:
Քարբերդի կուսակալութեան մէջ՝
Մալաթիա 18 գիւղերով, Սեբաս-
տիոյ կուսակալութեան մէջ՝ Կիւ-
րին՝ 23 գիւղերով, Տիվրիկ՝ 12,
Տարնտէ՝ 5 գիւղերով: Էնկիւրիի
կուսակալութեան մէջ Եղզկատ՝ 42
գիւղերով:

Ամենայն Հայոց կաթողիկոսու-
թիւնը 1292ին Սիս փոխադրուե-
ցաւ և հոն մնաց մինչեւ 1441:
Սիսի մէջ ունեցանք 18 կաթողի-
կոսներ, որոնց վերջինն է Տ. Դը-
րիգոր Մուսաբէկեանց. 1441ին
Եկեղեցական ընդհանուր ժողով
գումարուելով Ս. Էջմիածնի Մայր
տաճարին մէջ, ուր ներկայ էին

Աղուանից կաթողիկոսը, ինչպէս
նաեւ 700ի չափ եկեղեցական եւ
աշխարհական անձնաւորութիւններ
որոշուեցաւ Աթուր Ս. Էջմիածին
փոխադրել. բայց Տ. Գրիգոր Մու-
սաբէկեան որ հրաւիրուեցաւ գալ
հոն բազմել, մերժեց թողուլ Սի-
սը. ասոր վրայ ժողովը ամենայն
Հայոց Հայրապետ ընտրեց Տ. Կի-
րակոս Վիրապեցին. այս կերպով
Սիսը բաժնուած կաթողիկոսական
զատ թեմ մը եղաւ այդ թուակա-
նէն ի վեր:

Գաւառներէ Պատրիարքարան
եկած տեղեկութեանց ու խնդրա-
նաց հաճաճայն նպաստից Յուն-
նաթողովը որոշեց Որբանոցներու
ձեռնուան պաշարի հայթայթման
համար այժմէն երկերկու ամսա-
կան շրջել, այսինքն շուրջ 2,000
ոսկի:

Թէհրանի ռուսական պան-
քայի գանձապետը սպաննած եւ
գրամարկդէն 300,000 ռուպլի գող-
ցած ըլլալու ամբաստանութեան
տակ գտնուող Ճէյրանեանը Բա-
գու տարուեր է, ուր նահանգա-
կան դատարանի առջեւ պիտի
դատուի:

Բագուի հայազգի դրամա-
տէրներէն Պ. և Դ. Բակոբեան
բաժնորդագրական ընկերութիւն
մը կազմեր են 1,600,000 ռուպլի
դրամագումարով՝ 6400 բաժնե-
թուղթի բաժնուած, իւրաքանչ-
իւրը 250 ռուպլի: Նորակազմ ըն-
կերութեան նպատակն է նաւթա-
յին և ուրիշ հանքեր շահագոր-
ծել. ինչպէս նաեւ երկաթի ու
պղինձի ձուլարան բանցնել:

Չմիւռնիոյ մէջ Ս. Թէսթէ-
րէճեան 600 լիբանոց իր տունը
տեղւոյն ազգ. հիւանդանոցին կը-
տակած է: Նոյնպէս Կարնոյ մէջ
Ս. Խաչատուրեան 600 ոսկինոց
իր ջաղացը և Կ. Ղուկասեան 250
ոսկինոց տուն մը ազգին կտակած
են:

Տիգրանակերտէ կիմացնեն
թէ այս տարուան հունձքերը լաւ

ինքզինքնին մեղքէն շատ թաւա՞ծ
նորիւրկներ կան որոնք ժողովուրդի
սիրտէն խօսող կարգ մը շօշափելի սրը-
բութիւններ, մինչեւ իսկ եկեղեցիին
եւ լեզուն քանդելով բանիւր մը ընել
կը կարծեն, բայց ես հիմակէն կը բսիմ
որ ատենք ամենանքաղական խայտա-
ռակներ են որոնք ազգը աղէտի կրնան
առաջնորդել իթէ զիրենք կասեցնող-
ներ չգտնուին. զգուշանանք իրենցմէ
եւ զգուշացնենք մեր ընկերները:

Լեւոն Պողոսեան լայն յարաբերու-
թիւն ունէր այն ատեն շատ մը Պու-
սահայ թաղերու երիտասարդներուն
հետ. տասներկու թաղի մէջ հայրենա-
սիրական խմբակներ կազմած էր որոց
գործերը ազգային հարցերով հետաքր-
քութիւն յեղափոխական ընթերցումներ
ընելի պաղպաղեցողութեան պատրաստել
եւ եռամսեայ վճարներ ընելուն մէջ կը
կայանար: Վահրամ Պոյիս հաստատուե-
լէն մինչեւ Լեւոնի հետ ծանօթանալը
Լեւոնի ուղղութեամբ հինգ խմբակ
կազմած էր, որոնք երկու մտերմնե-
րու միացումով մէկ մարմին կազմեցին
մօտ հարիւր տասը անդամով որ ան ա-

տեն Պոյոյ մէջ յեղափոխական ամենէն
պատկառելի թիւ կը ներկայացնէր:
Իրենց եռամսեայ գրամահաւքումի մէկ
մասը կը զրկէին Արմենիական կուսակ-
ցութեան որ ան ատեն իր գործութեան
գագաթնակէտը հասած էր. հոս աւե-
լուրդ չենք սեպիւր ըսել որ Պողոսեան
քանի մը տարիներ «Արմենիա» թղթակ-
ցութեան պաշտօնը վարեց. եւ եթէ
ընթերցողը 87-90 Պոյիսէ գրուած թղթ-
թակցութիւններուն հետեւած է հոն
պիտի հանդիպի Վ. Տ. Ժածկանունով
շատ մը թղթակցութեանց որոնց մէջ
երիտասարդ հայրենասէրին հոգին եռ-
կուգար. անոր հետեւեցաւ Վահրամ
տարբեր ծածկանունով մը եւ ժամանակ
մը շարունակեց:

Պողոսեան 88ին հիւրը դրած էր «Ժո-
ղովրդեան Մասնաժողով» անունով
կազմակերպութեան մը որուն կէտ նը-
պատակն էր զուտ յեղափոխական կո-
չելով անտարբերները զարթեցնել.
մասնաժողովը եօթամսեայ դրութիւն
ունէր երբ Վահրամ եկաւ միացաւ ա-
նոր, եւ յայտնի է թէ որքան մեծ ե-
ղաւ անոր ուժը ատոր մէջը, հիմայ ե-

րեք հոգի կը կազմէին մասնաժողովը
որ ամեն քսան օրը անգամ մը, Սամա-
թիոյ, Եջնի Բաբուր, Գում Բաբուր,
Սուլթան Պայազիւ, Չաքմաքըլարի,
Եջնի Ճամիլի, Կալաթայի, Բերայի,
Իւսկիւտար եւ Գաւրէթօյի հրապարա-
կային պատերը կը ծածկուէին կարմիր
մեղանով գրուած ապստամբական կոչե-
րով, զոր դու եւս պատրաստուելու
վրայ եղող հայութիւնը ուսրափահար
կը լափէր, մինչեւ որ կառավարու-
թեան ականջը կը հասնէր լուրը եւ
լրտես ոստիկանները վրայ գալով կը
պատռէին յայտարարութիւնները. ա-
նոնք միայն պատերուն վրայ կոչեր
փակցնելով չաւաղանայան, եկեղե-
ցական տօնախմբութիւններու օրեր
երբ Հայրիկ, Սուրանցեանց կամ Ալէ-
թեմեան կը պատրաստէին երեք ըն-
կեր յեղափոխական կոչեր գրպանին
լեցուցած կը տղոսկէին եկեղեցիներէն
ներս եւ օձապոյտ գնացքով մը վրա-
նին եղած կոչերը կը ցրուէին եկեղե-
ցիին մէջ, զոր բարեպաշտ ժողովուրդը
երկրպագելու համար խոնարհած ատեն
գետնէն կը ժողուէր, ուր յուզուած ու

զոզողուն կը կարդար մանաւանդ
Վահրամի կարմիր հոգին, որ հայրենի-
քի ղեկավարութիւնը կարտասուէր եւ
յեղափոխական զաղափարին փարելով,
մէկ զրօշակի տակ համախմբուի եւ
ազգային հասարակաց թշնամիին դէմ
չափուելու պատրաստուի կը քարո-
զէր:

Ան ատեն որ, ասանկ գործունէու-
թիւն մը բաւական յանգիւղութիւն կը
նկատուէր, ի՞նչ յատկանշական փառ-
տու մը կը բարձրանար եկեղեցիի ա-
ւարտէն ետք ժողովուրդին մէջ, քանի
մը ժամու համար հասարակութեան
համար հրատապ խօսակցութեան նիւթ
կը կազմէր ցրուած կարմիր գիւղով յայ-
տաւարութիւնները, զոր անձանթ
ձեռքեր տարաղնած էին: Լեւոն, Վահ-
րամ եւ իրենց ընկերը Ա., որուն հե-
րոսները, իրենց պոյոյսը կը շարունա-
կէին խմբակներու շուրջը անոնցմէ
լսած գովասանական բառերէն կշտանա-
լով:

Շ. Կամսարական
(Շարունակելի)

